ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

—

Թագաւոր Կայսրը բարեհաճել է հետեւեալ հեռագրել Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

Լիվադիա, 14 հոկտ.

Նորին Սրբութիւն Կաթողիկոսին Ամենայն Հայոց.

Շնորհակալ եմ Ձեզ և յանձնարարում եմ հաղորդել Էջմիածնում տօնախմբութեան բոլոր մասնակիցներին իմ շնորհակալութիւնս՝ աղօթքների և ինձ արտայայտված ամենանպաստակ զգացմունքների համար.

ՆԻԿՕԼԱՅ

Այս հեռագիրը պատասխանն է Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետեւեալ հեռագրի.

Էջմիածին, 13 հոկտ.

Լիվադիա, Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրին.

Հայաստանում քրիստոնէական լուսաւորութեան հիմունքը դնող յաւերժայիշատակ ս. Մեսրոպի և Սահակի ձեռքով դրոշմված հայ տառերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի յոբելեանական հանդէսներին Էջմիածնում ժողովված հայ ժողովրդի բոլոր խաւերի, բարեգործական ու կրթական հաստատութիւնների ներկայացուցիչները ջերմ աղօթքներ վերառաքելով ինձ հետ և ամբողջ միաբանութեան հետ միասին նախաթոռ տաճարում Ձերդ Կայսերական Մեծութեան և հանուր Օգոստափառ Տան երկարակեցութեան ու երջանկութեան համար՝ առ ոտս Ձեր Մեծութեանն են արկանում ամենահաւատարիմ հպատակութեան և անսահման սիրոյ ու երախտագիտութեան զգացմունքներ.

Թող Ամենակարող Աստուած երկարէ Ձերդ Մեծութեան օրերը ի փառս քրիստոնէական եկեղեցւոյ և ի բարօրութիւն Մեծ Ռուսաստանի.

Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց